ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3751-Ա « 31 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի Հ.1714-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.07.2026թ. հ.20-Ել-52546 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Անահիտ Նավասարդյանի՝ ի դեմս ներկայացուցչի 08.04.2026թ. հ.Դ-34522-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2026թ. ապրիլի 6-ի «Երևան, Նորք-Մարաշ, Ս.Խանզադյան փողոց հ.13/2 հասցեի բնակելի տան և հողամասի նկատմամբ Անահիտ Բախշիի Նավասարդյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.1714-Ա որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 3-րդ և 4-րդ կետերում՝ «Ս.Խանզադյան փողոց հ.13/2» բառերը փոխարինել «Ս.Խանզադյան փողոց հ.13» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ